# ՑՈՒՑԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ[1]

## № 46

## ԱՒԵՏԱՐԱՆ

*Թերթեր՝ 290։— Պրակներ՝ 24, յուրաքանչյուրը միջին հաշվով 12 թերթից։—Մեծությունը՝ $10,7 \times 8 \times 3,8$ սմ.։— Նյութը՝ սպիտակ բարակ թուղթ։— Կազմը՝ արծաթապատ տախտակ։ Առաջին երեսին ամրացված են գեղեցիկ հյուսվածքազարդերին փակցված 17 կարմրագույն փոքր ակներ (մեկը կորած)։ Երկրորդ երեսի վրա ճնշումով նկարված են 12 առաքյալների և Մարիամ Աստվածածնի արծաթյա պատկերները. Շուրջը կան կարմրագույն 6 փոքր ակներ (մեկը կորած)։ Կազմն ունի 2 հատ ոսկեգույն արծաթյա բռնակներ, յուրաքանչյուրի վրա երկու կարմրագույն և 1 կապտագույն մանր ակներ։— Վիճակը՝ բավարար։— Գրությունը՝ միասյուն։— Գիրը՝ բոլորգիր։— Տողերը՝ միջին հաշվով 21։— Զարդագրությունը՝ կան կիսախորաններ, թռչնագրեր, կենդանագրեր, ծիլ թվով մարդագրեր և լուսանցազարդություններ։— Գրիչը՝ Մարգարե վարդապետ։— Ժամանակը՝ 1774 թ.։*

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

*Թ. 287ա—290բ.— Փառք... Արդ, եղեւ ծրեալ ի թվականութեանս մերոյ ի ՌՄԻԳ (1774 թ.), ի յերկիրս Արարատեան եւ ի մայր մեր լուսակառոյց, երկնահանգէտ, տիեզերահռչակ եւ տիեզերայոյր, արեգակնափայլ եւ գերապայծառ սրբոյ եւ մեծի սարսափելի Աթոռոյս էջմիածնի եւ ի հայրապետութեան Տեառն երիցս երանեալ տիեզերաշահ եւ աշխարհալոյր սրբազան Սիմէօն կաթողիկոսի Ամենայն Հայոց։ Գիտութիւն լիցի սիրելեացդ, զի եւ յայսմ ժամանակի թագաւոր ոչ գոյր յերկրիս յարեւելեան։ Զի ի ձեռն աշխարհակալաւեր Նատիր շահ կոչեցեալ, եղեալ ի խուժադուժ ազգէն բարբարոսաց, ի յերկրէն Խորասանայ՝ ինքնագլուխ թագաւորեալ եւ զթագաւորութիւն պարսից բնաջինջ արարեալ, բայց ինքն ինքն վերջապէս եւս ոչ թագաւորեալ, այլ ի զօրացն իւրոց չարաչար կոտորեալ զաւհաւատչեայն անմեղ արեանց ի Տեառնէ ընկալեալ։ Զի եւ յայսմ ժամանակի ոչ գոյր իշխող եւ տէր, զի ամենայն որ ինքնագլուխ եղեալ կեղէքէր ազգս հայոց եւ աւերէր երկիրս յարեւելեան, բայց իշխող երկրիս եւ խան նստէր ի քաղաքն յԵրեւանդ. եւ ինքն էր անարի եւ թուլամորթ ի պատերազմի, բայց սրբոյ դահոյս յոյժ արի։ Ո՜հ, թէ զի՞նչ գործէր, վասն զի էր ժանտաբարոյ, ագահ, անողորմ, խստասիրտ եւ խորամանկ։ Եւ թէ զի՞նչ գործէր ընդ սրբոյ գահիս, թէ ո՞րքան կեղեքէր իբրեւ զողրուկ արիւնաքարշ եղեալ ամենեւին ոչ յագեալ լինէր, ո՛չ դրամով եւ ո՛չ այլ այլով իւիք, այլ քարշէր զինչս սրբոյ Աթոռոյս, եւ ամենեւին ոչ յագենայր, ընդ երեսս գառն ձեւանայր եւ ի ներքուստ գայլ արապացի։ Ընդ խստասիրտ գազանացեալ բնութեանն զինչ եւս ասացից, մինչ ամենահայեաց Տէրն տեսցէ եւ ողորմեսցի տառապեալ սրբոյ Աթոռոյս, եւ զսրտաբեկ եւ զսրտակոտոր հայրապետիս։ Եւ դարձեալ նորագոյն դարանակալ աշխարհակերպ գազանն, որ նստէր ի քաղաքն Շօշ եւ նա եւս մեքենական հնարիւք քարշէր զինչս սրբոյ գահոյս՝ իբր թէ ընծայեմ յողարկում. եւ ամենայն որ բերանաբաց եղեալ ոչ յագենային, ոչ ոք տեղեաց գայր յօգնութիւն, մինչ արդարադատն դատ արասցէ որպէս արար Նատիրին, վասն զի երեւի այսպիսի անողորմն բռնակալաց արդահատումն, եւ մերձ զաւհաւատչեայն որպէս եղեւ Նատիր շահին եւ այլոց անողորմից, զի թէ զի՞նչ գործեաց ընդ Ղազար կաթողիկոսին։ Զի թէ մեզ լիցի մաքուր աղօթք, թշնամիք սորին շուտով կորնչին, բայց ոչ ունիմք, զի անօրէնութիւնք մեր բազմացան եւ թագաւորութիւն ազգիս բարձան, վանք եւ անապատք մեր իսպառ բնաջինջ եղեալ աւեր դարձան, եւ իշխանք մեր իսպառ վերջացան։ Զի ով ոք իցէ, որ ոչ ողբասցէ զմեզ։ Աստանօր լրումն եղեւ մարգարէութիւն մեծին Ներսէսի, յորում ողբայր անմխիթար եւ անտանելի սգով ազգս Հայոց, որպէս եւ ասէ՝ «Ողբամ զքեզ, Հայոց աշխարհդ». եւ դարձեալ ողբայ զժամն եւ զժամանակն, յորում լիովին կատարեցաւ, զի ի մերումս ժամանակի օգն եւս ապականեալ։ Զի թէ որպիսի այլանդակ այլ եւ այլ եղանակ շարժի եւ բերք յերկրին ապականէ եւ առնէ սով մեծ, զի ոչ այլ ինչ է, եթէ ոչ բարկութիւն Տեառն, մի Տէր, որ տառապեցոյցն նոյն ինքն ըստ մեծի ողորմութեամբն իւրում ողորմեսցի։*

*Արդ, ես յետնեալ ամենաթշուառս եւ ստացող սրբոյ աւետարանիս Մարգարէ եւեթ վարդապետս, որ իմով ձեռամբս գրեցի զի ի յինանցն սկիզբն արարի գրել, եկանք յուլիսի ամսեան սկիզբն, հիւանդութիւն մեծ անկաւ ի վերայ իմ. մինչ մի ակս եւս խաւարեցաւ, այլ գեղ չի մնաց որ չի արարի, այնուհետեւ յուսահատեալ վարանէր սիրտ իմ, կսկծայր աղիք իմ եւ ողբայր բոլոր անձնս յարաժամ, եւ մնաց աւետարանս կիսատ, դեռ կէս գլուխն չէի գրեալ։ Ապա կրկին յուսալով անհուն ողորմութիւնն Աստուծոյ, սկսայ միւս մի ականբն գրել, որ ամենեւին նշմարանքն հազիւ երեւէր. եհաս անհուն ողորմութիւնն Աստուծոյ, որ աւուր բացուաւ եւ յուսաւորեաց*

1. *Նարունակված 1950 թվի մայիս-հունիս, հուլիս-օգոստոս, սեպտեմբեր-հոկտեմբեր, նոյեմբեր-դեկտեմբեր և 1951 թվի հունվար-մարտ համարներից։*

սուրբ աւետարանս զխաւարեալ ակն իմ. յորում գոհութիւն բժշկողին ամենայնի, զի եղիցի յետ իմոյ անցմանն յիշատակ սրբոյ դահիս, եւ այսքանս բաւեսցի։

## № 47

## ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 282։— Պրակները՝ 23, յուրաքանչյուրը 12 թերթից։— Մեծությունը՝ 18×5,5×6 սմ.։— Նյութը՝ ողորկած հաստ թուղթ։— Կազմը՝ կաշեպատ տախտակ (ներսից փակցրած սպիտակ կտոր, կարմիր և սև զարդերով)։— Վիճակը՝ անբավարար (կազմը փոքր ինչ քայքայված, սկզբից և վերջից թերթեր են ընկած)։— Գրությունը՝ երկսյուն։— Գիրը՝ բոլորգիր։— Տողերը՝ միջին հաշվով 19։— Զարդագրությունը՝ լուսանցազարդություններ, թռչնագրեր և ավետարանիչների նկարները, վերնագրերը կարմիր թանաքով։— Ժամանակը՝ 16—17-րդ դար։

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Թ. 72ա.— Յիշեցէք ի Քրիստոս զՎարդանէսն եւ զհա(յ)րն իւր զՄուրատն, եւ զմայրն զԽէրիցն, որ վերբերին ետ կազել եւ կազմել զսա յիշատակ իւրն եւ ծնողաց իւրոց։ Արարչագործն Աստուած իւր մեղաց թողութիւն շնորհէ։ Դարձեալ զկինն զԹուրվանշէն, զորդին զԱւետիսն եւ զՆուրիջան եւ զՓաշիկ, ամէն։*

*Թ. 73ա.— Դարձեալ յիշեցէք խօջայ Եղնազարն եւ կողակիցն Գուլփէրիսան...*

*Թ. 126բ—127ա.—Ես՝ Յարութիւն Եմավենեան, այս ավետարանն գրի ժամն եւ բաժանեցի հոգու վեց դա(ն)գ։ Ինչ որ մնում և չար ըլնի տվի ժամին լուսարին։ Հիրեք դանգն էլ տվի Սարգսին յինէ Եմաւենեան որդուն ուր եւ կամիցի յիներ եւ հիրեք դանգն էլ տվի ավետարանին ծախս, իրան զարդարին կազմավ. եւ խալ յինի որ կտորեց նոր զարդարած բահն այս հիրեք դա(ն)գ, որ տվել (Ե) աւետարանին Յովանէս խամըն ի ձեռնամուխ յինի։ Եւ որ հոգով բաժանի հիրէք դանգն որ ավետարան տէրտէրն վեր ունի սայ Ովանէսին, որ ծախս անի ավետարանին, դա է գնէլ Նոր-Ջուղայու Թիւն աւետարանիս ՀԼԺ (130) եւ թիւ ընծայման աւետարանիս էր, որ ընծա(յ)եծաւ նոր տարին 187-ին (հավանական է Ջուղայեցու տոմարով)։ Դարձեալ վերջին ծառայող սուրբ աւետարանիս, յոր ընծայեցաւ ի Սրբոյ Ամենափրկչեան վանէն, հետ մին պատկեր Տիրամայր կուսին Մարիամու ձեռամբն ե.փր (Խաչատո՞ւր) վարդապետ Կարապետն։ Եւ ո(վ) որ կարդա(յ), մին բերան յիշի Յարութիւնի կողակից Մարիամին եւ որդոցն Թամազին, եւ Սարգսին, եւ Մկրտչին, եւ որ կամիցի դատել եւ հանել սն Սուրբ Յովանէսի ձեռանէ, սոցա տացէ... յաւուր դատաստանի։*

*Եւ հարսին, Համբարձումի որդին Աւետիքին, Յովանէսին, որդանցն Սարգսին, վերջն ամին ով ունեա կա(յ) յիշզօղ։ Օվ որ կարդա(յ) մի բէրան յիշի յաս եւ կողակից Մարի(ա)մին եւ Սաղիկին, որդոցն Թամազին, Սարգսին, Մկրտիչ Յովանէ(սին), զրաւր Թալանին, Աէրխաթունին, Հո(խփ)սիմէ հարսին, Համիմին։*

*Թ. 129ա.— Զվերջին ստացող սուրբ աւետարանիս զՎարդանէս եւ ծնաւղսն իւր, զՄուրատն եւ զԽէրէքն, եւ զեղբարքն իւր, զՓաշն, զՆերսէս և Ստեփաննոսն, եւ զքորերսն զԽոնդքարն, եւ զՍալթան, եւ զՎարդանէսի կողակիցն զԽանզադէն եւ զԹուրվանշէն եւ զորդիսն, զՆուրիջան, զԱւետիս, զԽլղաթն եւ դստերսն զԳաւզալն, զԱնդալաթն եւ զԳուլբէկին։ Եւ զայլ ամենայն արեան մերձաւորս նոցին, զորս յիշեցաք եւ որք մնացին, յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք նոցին, ամէն։*




*Թ. 216ա.— Դարձեալ յիշեցէք խօջայ Թասալի(ն) եւ որդիքն Եղնազարին Հա(յ)րապետն եւ կողակիցն Թասելի։*

*Թ. 216բ—217ա.— Զվերջին ստացող սուրբ աւետարանիս զպարոն Վարդանէս եւ զծնաւղսն իւր՝ զՄուրատն եւ զԽէրէքն, եւ զեղբարքն իւր զՓաշիկին, զՆերսէսն, զՍտեփաննոսն, զքուերսն զԽոնդքարն եւ զՍալթան, յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք նոցա, ամէն։*

*Դարձեալ Աստուած ողորմի ասացէք Վարդանէսին եւ կողակցին, Խանզադին եւ Թուրվանշին, եւ որդոյն Նուրիջանին, եւ կողակցին Ջանադին եւ Գուլզադին, եւ որդոցն Խուրիջանին, Մխիթարին, Ղարիպջանին, Ամիրջանին եւ դստերացն Եաղբէկոյն, Ջանբէկուն, Թաղբէկուն եւ Եաղբէկու տղայոցն Արիջանին եւ Նուրիջանին, միւս որդոյն Աւետիսին եւ կողակցին՝ Թազլղուլին եւ որդոցն՝ Բղաւին, Եաղնազարին, Ամիր Նազարին եւ դեռաբոյս որդոյն Մուրայէչին։ Եւ դստերն Մարգարիտին եւ զօքանչին, Խանո(ւ)մին, եւ որդոյն Թումին, եւ Վարդանէսի միւս որդոյն Խլղաթին, եւ կողակցին Ջանադին և որդոյն Խոջին, եւ Վրդանէսի դստերացն Գօզալին և որդոյն Գուլնազարին, եւ դստեյացն Շամշուղամարին, Գուլվարդին եւ Խանադին։ Եւ միւս դստերն Անդալաթին եւ որդոցն Սաւարին եւ Ամիրխանին եւ դստերն Ոսկին, եւ միւս դստերն Գուլբէկուն, եւ որդոցն՝ Բաղին եւ Միրզին եւ դստերն Խանբէկումուն, յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք նոցա, ամէն։*

*Դարձեալ Աստուած ողորմի ասացէք Վարդանէսի եղբաւր՝ Բաքրաչանին եւ կողակցին՝ Խանզադին եւ որդոյն Տէր Գրիգոր սրբազնիտ քահանային եւ կողակցին Փարիխանին եւ որդոյն Գուլամիրին, եւ միւս որդոյն Մուրատին, եւ կողակցին Գօզալին, եւ դստերն՝ Խանադին, եւ Խանադի որդոցն՝ Թաւաքալին, Յակոբին, եւ դեռաբոյս դստերն՝ Գեղծունին եւ հանգուցեալ որդոցն Դիլարին, Ամիրխանին, Ամիրին եւ հանգուցեալ դստերն Եաղբէկուն, միւս դստերն զՎարդան, զորդին զԱրիջան, եւ զհանգուցեալ դուստրն՝ զՍալամն։ Յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք նոցա, ամէն։*

*Դարձեալ Աստուած ողորմի ասացէք Տէր Գրիգորի մօրն՝ Խանզադին, եւ ծնողացն՝ Ամրատին եւ Բէկիչանին, եւ եղբարցն՝ Շաղաւաթին, Վարդանին, Յովանիսին, եւ քերցն՝ Թագայգուլին, Խամաւչին եւ ննջեցելոցն ի հետ կարդին, ամէն։*

*Թ. 217բ.— Դարձեալ վերջին ժառայօղ սուրբ աւետարանիս, որ ընծա(յ)եցաւ ի Սրբոյ Ամենափրկչեան վանէն հետ մին պատկեր Տիրամայր կուսին Մարիամու ձեռամբն հ. ս. վարդապետ Կարապետեան Նոր-Ջուղայեցւոյ, թիւն աւետարանիս էր 152 եւ թիւ ընծայման ավետարանի, որ ընծա(յ)եցաւ նոր հաստատեալ Նոր(ը)նծայ Յարութինին 1870-ին ապրիլի 17-ին։ Որ կարդայ, մին բէրան յիշի նորան կողակից Մարիամին, որդոցն՝ Յովհաննէսին եւ Սարգսին եւ Մկրտչին։ Որ կամիցի դատել եւ հանել աւետարանս Սուրբ Յովհաննէս ի ձեռանէ սոցայ տացէ համար յաւուր ա(հ)ենին։*

*Թ. 282բ.— Փառք... Սուրբ Երրորդութեան Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ։ Որոյ շնորհաւքն աւարտեցաւ եռահրաշ եւ հոգիազարդ աւետարանս, զոր է շաղկապեալ երանեալ աւետարանչացն քառ բազմերանգ գունոց ի Դոստայն անցելով համեմար։ Զոր ա(ռ)ևստակեալ անուշոց ծաղկանց իւղեփեցական կազմութեամբ որ քառ Հոգւոյն... գաղափարելով քառ յորոնց արփիացելոցն դասակցութեանց առ ի յարմարումն եկեղեցւոյ յարդիւ խաղաղութեան դլխոցն պատուականեալ, զի յայժմանէ կատարելութեան...*

№ 48

## ԱՒԵՏԱՐԱՆ

**Թերթեր՝** *318։—* **Պրակներ՝** *27, յուրաքանչյուրը 12 թերթից, իսկ առաջին և երկրորդ պրակները՝ 10 թերթից։—* **Մեծությունը՝** *18,5×14,2×6 սմ.։—* **Նյութը՝** *դեղնագույն թուղթ։—* **Կազմը՝** *կաշեպատ տախտակ, երկու երեսները՝ արծաթապատ։ Առաջինի կենտրոնում՝ Քրիստոսի խաչելությունը, իսկ երկրորդի կենտրոնում՝ Աստվածամոր նկարը՝ Յիսուսին գրկած։ Արծաթապատ կազմի վրա կան 30 քարեր։—* **Վիճակը՝** *բավարար։—* **Գրությունը՝** *երկսյուն։—* **Գիրը՝** *բոլորգիր։—* **Տողերը՝** *21։—* **Զարդագրությունը՝** *Թ. 1ա—14ա՝ տերունական նկարներ, 14բ—19ա՝ խորաններ եւ համաբարբառ։ Աւետարանների սկզբներում ավետարանիչների նկարները։ Կան լուսանցազարդություններ, զարդագրեր և թռչնագրեր։ Նախադասությունների սկզբնատառերը՝ կարմիր թանաքով։—* **Գրիչը՝** *Մելքիսեդեկ։—* **Ստացողը՝** *Մկրտիչ։—* **Ժամանակը՝** *1499 թ.։—* **Վայրը՝** *Արծկէ քաղաք։—* **Պահպանակ՝** *սկզբում և վերջում կան մեկական թերթ մագաղաթյա ուղղագիծ երկաթագրով։*

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

*Թ. 314բ—317բ.— Աւրհնութիւն, գոհութիւն, յարեբանութիւն գթածին... Որոյ ցանկացող եղեալ սուրբ աւետարանիս համեստ եւ սրբասէր մայրն, քնքուշ (չորս բառ ջնջված) Մկրտիչի եւ զտղայքն իւր եւ զամենայն արեան մերձաւորսն առ հարկն յիշէք ի Քրիստոս եւ յի բերանով եւ ուղիղ սրտիւ Աստուած ողորմի ասացէք, եւ Աստուած զյիշողս յիշէ յիւր միւսանգամ գալստեանն, ամէն։ Արդ, յերես անգեալ աղաչեմ զձեզ, ո՛վ մանկունք սուրբ եկեղեցւոյ եւ հանդիպողք անգին մարգարտիս, կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զկենդանի նահատակն զՏէր Աստուածատուրն որ դառն չարաչար մահուամբ ի ձեռաց անօրինի սրամոյն պիշերահալած դողալով սարսափմամբ ի յահէ ճայլատէն խոցոտեալ արեան թաթախ եւ ոսկրաբեկ տանջանօք փոխեցաւ ի Քրիստոս եւ դասեցաւ ընդ սուրբ քահանայքն Մելքիսեդեկի եւ ընդ սուրբ նահատակին՝ սուրբ Ստեփանոսի, զի որպէս ի քարավէժ առնելն սուրբ նահատակին բացեալ երկինքն եւ երեւեալ Քրիստոս չորէքկերպեան լուսեղէն աթոռով աստուածութեամբն իւրով զէմ յանդիման սուրբ նահատակին յայտնեցաւ հրեղէն զօրօքն իւրով։ Նոյնպէս բացցէ Տէր Աստուած զդուռն մտից դրախտին կենաց բարի վերստին եւ գերադոյն նահատակին՝ Տէր Աստուածատուրն եւ դասեսցէ ընդ աջակողմեան աւազակին զինքն, եւ զծնօղսն իւր զՏէր Խաչատուրն, եւ զորդիսն ի զնորընծա(յ) քահանայ զՏէր Յովանէսն, եւ զորդոց որդիսն զծաղկեալ զաւակսն իւր զՇաղաւաթն, եւ զԱստուածատուրն եւ զՏէր Աստուածատրու կենակիցն՝ զԽնար խաթունն, եւ զմեծ հարսն իւր՝ զՇնոհւորն, եւ զկր(տ)սեր որդին՝ զՄխիթարն, եւ զամուսին իւր՝ զՄահսում փաշէն եւ զամենայն արեան մերձաւորսն, ամէն։*

*Դարձեալ յերես անգեալ աղաչեմք զմանկունք սուրբ եկեղեցւոյդ, որք հանդիպ(իք) սմա կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զմայր Տէր Աստուածատուրին՝ զՓաշամելիքն, եւ զմայր Տէր Յովանիսին, զՀաջրէվարդ եւ զԽնքուշն, որ զարծաթն երետ աւետարանիս, եւ զմայր նորա՝ զՏայուսխաթունն եւ զամենայն արեան մերձաւորք Տէր Աստուածատուրին, զկենդանիքն ընդ երկայն աւուրքս առնէ եւ զննջեցեալքն յիւր արքայութիւնն հանգուսցէ ընդ նախահայրն եւ ընդ նահատակսն, ընդ հայրապետացն, ընդ առաքելոցն, ընդ մարգարէիցն, ընդ ճգնաւորաց(ն), ընդ կուսանացն. ամէն։*

*Աջդ Աստուծոյ եւ հայրական լոյս արարիչ Որդի եւ Բան եւ Սուրբ Հոգին ճշմարտութեան պահեսցէ զՏէր Յովանէսն եւ զիւր տունն եւ զտղայքն զամենայն, յայսմ կենաց մինչ ի վաղճան, արժան առնէ արքայութեան, ամէն, եղիցի, ամէն, եղիցի։*

*Դարձեալ յերես անկեալ աղաչեմ զընթերցող սուրբ աւետարանիս, յիշել ի Տէր Աստուած զմեղսամած եւ զանարհեստ փանաք գրչիս Մելքիսէթ չանարժան ծառայիս եւ Աստուած զձեզ յիշէ յիւր արքայութիւնն։*

*Գրեցաւ աւետարանս ի քաղաքն Արծկէ, ընդ հովան(ե)աւ Սուրբ Աստուածածնի տա-*

ճարիս եւ պատերազմի սուրբ նշանիս, ի թվականութեանս Հայոց ՋԾ եւ ի ԽԸ (1499 թ.), ի յաւգնութիւն Տէր Յովանիսին եւ իւր տղայոցն, ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՄկրտիչն եւ զկողակիցն իւր՝ զՄուղամն եւ զդեռաբոյս որդին՝ զԱստուածատուրն եւ լի բերանով Աստուած ողորմի ասացէք, եւ Աստուած ձեզ ողորմեսցի, ամէն։

### ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 109ա.— Յիշատակ է հրաշալի մեռելճարոյց սուրբ աւետարանս Առնոց Սուրբ Յովհաննէս եկեղեցւոյ, արդեամբ համայն ժողովրդեան, աշխատութեամբ Աւետիսին Սահակ եղբօր, որ եւ ստացանք ի 1897 թուականին, յունիս 3-ին, Հայաստանիս աւերման, աղքատութեան, հայոց անտէր ժողովրդեան, սարսափելի կոտորման ժամանակին, 1896 թուականին յունիսի 3-ին։

Թ. 316բ.— Դարձեալ յիշեցէք ի սուրբ եւ ի մաքրափայլ յաղաւթս ձեր զպարէմիտ եւ աստուածասէր ասթա Միրաքն, զհայրն իւր՝ զՄկրտիչն եւ զմայրն իւր՝ Սաֆարմէլիքն, եւ զեղբայրքն իւր զԽաչատուրն եւ զՙրաքն եւ զկողակիցս նոցա՝ զԽանաղէն եւ զՀոռոմն եւ զորդիս նոցա՝ զԱստուածատուրն եւ զԹարոսխան եւ զՄկրտիչն եւ զայլ ամենայն արեան մերձաւորսն իւրեանց, զկենդանիսն եւ զհանգուցեալսն, յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք նոցա, եւ Աստուած ձեզ ողորմեսցի յիւր միւսանգամ գալստեանն, ամէն։

### № 49

### ՔԱՐՈԶԱԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

Թերթերը՝ 431։— Պրակները՝ 36, յուրաքանչյուրը 12 թերթից։— Մեծությունը՝ 26×20×7 սմ.։— Նյութը՝ հաստրակ թուղթ։— Վիճակը՝ քրքրված կազմով, սկզբից և վերջից պոկված թերթերով, որոշ թերթեր էլ կրծած։— Գիրը՝ բոլորգիր։— Գրությունը՝ երկսյուն։— Տողերը՝ 33։— Զարդագրությունը՝ վերնագրերի գլխատառերը զարդագրեր են, լուսանցքներում ունի զարդանկարներ։— Գրիչը՝ Մարիամ գրչուհի։— Ժամանակը՝ ԺԷ դար։

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա—6ա.— (Սկզբից բերի, գլխացանկ)։ Սկ. «Պղուխ ամսոց, եւ զանկակին, եւ ընծայից, եւ ամսոց, եւ առէ մուտ է Քրիստոսն...»։

Թ. 6բ—431բ.— Գրիգորի եռամեծի քաջ ճռետորի եւ անյաղթ փիլիսոփայի, աշակերտի Յովհան Որոտնեցոյ։ Արարեալ բանս խրատականս ոգէշահս եւ ճաճճարս իմաստայեղ ի մեկնութիւն եւ ի գովեստ փառաց տօնից տէրունականաց, ի պատիւ սրբոց եւ ի պտտճառ գիտութեան (ն)շմարաց, մանաւանդ ի յօղք արտասուց։ Անձանց բաղձելոց։ Յաւետ ի ճշմարտութիւն կարգաց ուղղափառաց։ Եւ յեղծումն բարբաջմանց չարափառաց. ի յիղձ մաղթանաց ոմանց բանասիրաց եղբարց ճարազատաց նորին աշակերտաց...

### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 31բ.— ...Զմեղաւոր գծողս եւ զծնողսն իմ յիշեցէք, Աստուած զձեզ յիշէ։

Թ. 126բ.— ...ԶՄարիամ ախմար գրիչս յիշեցէք յաղօթս ձեր, յորժամ ըզտիք ինչ ի սմանէ։

Թ. 179ա.— Զբազմամեղս յամենայնի զՄարիամ (սուտ)անուն, որ միայն զանունս իմ եւ ոչ զիրս։ Եւ զծնողսն իմ աղաչեմ յիշել ի Տէր բարի կամաւք։

Թ. 205բ.— Եւ ինձ մեղաւոր գրչի Մարիամ խնդրողի բանիս մեղաց թողութիւն եւ ողորմութիւն յաւուրն դատաստանի յանյիշաչարն Տէր, եղիցի, եղիցի։

Թ. 214բ.— ...Այլ եւ ես մեղօք մաձեալ եւ մեռեալ հոգի Մարիամ սիրող բանի յերեսս անկեալ աղաչեմ զհանդիպողսդ, դի եւ մեզ խնդրիցէք զթողութիւն ի յաՀեղ ատեան Քրիստոսի։

Թ. 257բ.— Յորոց փրկեսցէ Աստուած Փրկիչն ամենայնի... Եւ զատամել մեղապարտ եւ անարժան գրչիս մեղաց թողութիւն խնդրել հայցեմ սխալանաց եւ խոշորութեան գրոյս վասն Աստուծոյ։

Թ. 277բ.— Զձեզ աղաչեմ,

Ո՛վ սուրբ ընթերցողք հոգով ի լի,
Որք հանդիպիք այսմ տառի,
Եւ ՙրախճանայ աւուրս տօնի։
Սուրբ գալստեանըս Միածնի։
Զիս զմեղօք մեռեալ ոգի,
Պիտակ Մարիամ սիրող բանի,
Յիշման արէք զիս արժանի,
Թերեւս Տէրն յիս գթասցի, ամէն։

Թ. 357բ.— Յիշեա Քրիստոս Աստուած զանպիտան գծողս Մարիամ ապաշխարողս եւ զծնողսն իմ ղհոգեւոր եւ զմարմ(ն)աւորսն, եւ զամենայն երախտաւորսն, եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ եւ նմա փառք յաւիտեանս, ամէն։

### ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 6ա.— Կնիքներ՝

| | |
|---|---|
| Ք. ՏՐ. Ծ.<br>Ս. ՏՐ. Մ.<br>1861 | ՔԻ. ԾԹ.<br>ՏՐ. ՄՀԱԿ<br>ՌՃԿԸ |

Թ. 356ա.— Լուսանցքում. Վայ ինձ մեղաւոր փահանայիս, զոր վասն իմ է ասացեալ եւ ոչ վասն ինքեան։

№ 50

## ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթեր՝ 325։— Գրակներ՝ 23, յուրաքանչյուր միջին հաշվով 12 թերթից։— Մեծությունը՝ 24,8×16×7,5 սմ.։— Նյութը՝ հաստ դեղնավուն թուղթ։— Կազմը՝ կարմիր մեռաքսով պատած տախտակ, միջից գծավոր լաթ, առաջին երեսը արծաթապատ, չորս կողմից մահիկներ, մեջտեղում ճաճանչող խաչ շրջանակի մեջ։ Եղթայով միացած են երեք արծաթ խաչեր։— Վիճակը՝ բավարար։— Գիրը՝ բոլորգիր (բնանկյունում կատարված է միայն վերջակետից հետո)։— Գույները՝ երկսյուն։— Տողեր՝ 19։— Զարդագրությունը՝ յուրաքանչյուր ավետարան ունի իր խորանը, կան թռչնագրեր և այլ զարդագրեր։— Ժամանակը՝ 1298 թվից առաջ գրված (Նորոգված 1467 թվին Գողթնիում)։

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

*Թ. 255բ.— Զմեղապարտ ծրողս յիշեցէք ի Տեր իմ Յիսուս եւ Աստուած զձեզ յիշողսդ յիշէ, ամէն։*

*Թ. 312ա.— Զմեղսաներկ ծրողս յիշեցէք ի Տէր իմ Յիսուս եւ Աստուած զձեզ յիշէ։*

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Թ. 6բ.— Զխորամ հոգեւոր ժողովուրդս, որ եմ նորոգել սուրբ աստուածախօսս աւետարանս փափագ սրտիւ եւ յոյժ խնդութեամբ եւ հալալ ընչանց ես Եգիր ի դուռս (Սուրբ Սարգիս) յիշատակ իւր եւ իւր ծնողացն իւրոց, զհայրն իւր Զաքարէն եւ զմայրն իւր... Խաթոնն եւ զորդիքն իւր զ...անն, որ փոխեցաւ ի Արարիչն եւ զայլ Գոլիջանն եւ զԹագ...ն եւ զկենակեցն իւր... Խաթոնն եւ զայլ մեծ եւ փոքր յիշեցէք ի Քրիստոս եւ Աստուած զամենայն արհնեցէ որ եւս Ճ (100) զանեկան իւր հոգոյն... եւ Ա (1) չարէք սաղոն։*

*Ի թվին ՉԽԷ (1298), ի թագաւորութեան Ռուբինացս։*

*Թ. 152ա—152բ.— Փառք... Արդ, նորոգեցաւ սուրբ աստուածախօսս աւետարանս ի գաւառս Գողթան ընդ հովանեաւ սուրբ եւ անա(ն)ց սուրբ Գէորգեայ զօրաւորիս եւ սուրբ Նշանիս եւ այլ սրբոցն ի սմայ ի փծուն եւ նորա ուսումնամիտ սարկաւագիս եւ վայելումն անձին մերում եւ յիշատակ ննջեցելոցն մերոց ծղնոյ աստուածայաէր քահանայիցս եւ հոգաէր տանուտ(է)րէցս եւ հոգագործ ժողովրդեանս երիտասարդաց եւ կուսանաց, ծերոց եւ տղայոց, որով արհնութիւն Աստուծոյ հանգիցէ ի վերայ սոցա եւ հանգուցելոց մերոց, ամէն։ Բառնայ ի մէնջ Տէր Աստուած զսով, զսուր, զմարախ, զԹաԹա(ւ)ռ, զչորաւկ, զդալուկ, զմահ տարաժամ, զերաշտութիւն, զհուրայլցանութիւն, ամէն։ Եւ յետ ելանելոցն յսել տայ ննջեցելոցն մերոց. Է.այի երանաւէտ Քրիստոսի, ամէն։*

*Նորոգեցաւ ի թուին ՋԺԶ (1467 թ.), ի թագաւորութիւն պարոն Ջանհանշա Միրզախս, ի հայր(ա)պետութիւնն Տեառն Ստեփաննոսի ար(հ)ի եպիսկոպոս Գողթան գաւառիս։*

*Թ. 255բ.— Աստուած ողորմի Իբրէի ծնողաց եւ որդոց արեւշատութիւն Հաւանկս սուրբ աւետ(ար)անիս վախն Նրեստ։ Աստուած ողորմի առէք։*

№ 51

## ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթեր՝ 320։— Գրակներ՝ 26, յուրաքանչյուրը 12 թերթից։— Մեծությունը՝ 17,5×13,5×6,5 սմ.։— Նյութը՝ նուրբ մագաղաթ։— Կազմը՝ կաշեպատ տախտակ։ Առաջին երեսի վրա՝ ճնշված մի խաչ և մանր զարդեր, երկրորդ երեսի վրա՝ 78 բրանզե բեվեռներ, երկու բռնիչի օղակներ, ճնշված մի խաչ և մանր զարդեր։— Վիճակը՝ բավարար։— Գույնը՝ երկսյուն։— Գիրը՝ բոլորգիր։— Դատարկ թղթեր՝ 1, 12, 13, 161, 252, 253։— Տողեր՝ 21։— Զարդագրությունը՝ մարգագրեր, թռչնագրեր, գազանագրեր, լուսանցազարդություններ, ավետարանիչների նկարները, խորաններ և կիսախորաններ։ Վերնագրերը գրված են ընդհանրապես կարմիր թանաքով։— Գրիչը՝ Մինաս։— Ժամանակը՝ 1647 թ.։— Վայրը՝ Կոստանդնուպոլիս։— Պատվիրատուն՝ Ցարխուդատ։— Պահպանակներ՝ մի մի թերթ մագաղաթ, հին գոթերեն գրությամբ, կրոնական բովանդակությամբ։

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

*Թ. 318բ—320ա (գիրը և թանաքը բոլորովին տարբեր ավետարանի գրից և թանաքից).— Փառք... Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ մեղաւք խաւարեալ եւ անարժան Մինաս գրչիս ի աստուածապահ քաղաքիս Կոստանդինուպաւլսոյ, ի դուռն Սուրբ Նիկողայոսի, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին, ի թվին Հայոց ՌՂԶ (1647) եւ ունի տարիս կենդանակերպ զՁըրհոսն...*

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Թ. 251բ.— Յիշատակ է աւետարանս, յիշեցէք եւ Աստուած ո(ղո)րմի ասացէք Մահդսի Տէր Յոհաննին եւ ծնողաց Գալուստին, եւ մորն Խանումին, եւ որդոցն Նահապետին, Աւետիքին, ամէն։ Որ աւաւ իւր հալալ վաստակաւ, եդ յիշատակ։ Որք որ կարդաք եւ ողո(որ)միս տաք, ամէն։*

*Թ. 319ա.— Դարձեալ աղաչեմ զձեզ, որք հանդիպիք սմայ յիշեցէք յաղաւթս ձեր զստացաւղ տառիս աստուածային. հաւատարիմ ծառայ Աստուծոյ հոգի անկար ունի եւ բարեսէր զվերինն խորհելով զորգէսն եւ զխարդն ծանուցեալ զստորակայիս փափագող եղեալ աստուածոսնակ կտակիս եւ տիրաւանգ գանձիս կենսաձիր Սերբրիս եւ լուսաւորող Սովբերիս եւ աստուածաբուխ աղբերիս, որ եւ ծառայն Աստուծոյ Ցարխուդատն մտաւ աճեալ զհրամայեալն ի սրբոց թէ երանի որ ունիցի զաւակ ի Սիոն եւ ընտանեակ (յ)Երուսաղէմ. առեալ զսայ յիշատակ հոգւոյ իւրոյ*

*ունելեալ, պատուիրանաց ի քրիստոսաւէր ուսուցանիչն ունելով զսոսա բարեխօսս։*

*Արդ, որք հանդիպիք այսմ աստուածային կտակիս, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զՑարխուզատն եւ զամենայն արեան մերձաւորս նորա եւ զնախնիս ծնաւղն, զմայրն իւր՝ զՃանխաթունն, եւ զհայրն իւր՝ զՂուզին, զՏալվաթն, զՄկրտիչն, զՃահրիստանն, զխաթուն փաշան, ըՋաքարիայն, զխաթունճան շընահատուրն, զԿոպումն, զԹուրխնճն, զՄարիամն, զխուպաթն, զՏալվաթն, զՏալվաթխարն եւ ամենայն զարմից եւ զաւակացն կենդանեացն եւ հանգուցելոցն, եւ որ ցաւակցարար յիշեսջէ զի սմայ յիշատակեալս խնդրելով ի Տեառնէ շնորհել սոցայ զանըսպառ պարգեւս եւ զանսպառ ուրախութիւնն, զերանաւէտ կոչումն եւ պատրաստեալ հանգիս(տ)ն ընդ սուրբս եւ սիրողաց անուան նորայ վայելել ի նոյնինքն ի պարգեւատուէն համայն բնաւից զսայ լրմամբ երանականութիւնն յիշեալ լիցիք ի Քրիստոս, ի Յիսուս ի Տէր մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։ Ի յերկիրն Նախչիւան, ի գիւղն Կաղ, ի յեկեղեցին Սուրբ Գէորգ եւ Սուրբ Գրիգոր։*

## № 52

## ՔԱՐՈԶԱԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

Թերթերը՝ *426։*— Պրակները՝ *36, յուրաքանչյուրը միջին հաշվով 12 թերթից։*— Մեծությունը՝ *25,5×19,6×6,4 սմ։*— Նյութը՝ *դեղնագույն թուղթ։*— Կազմը՝ *կաշեպատ տախտակ, վրան զարդաքանդակ, ներսից տպածո կտավով պատած։*— Պահպանակներ՝ *սկզբում 3, իսկ վերջում 1 դատարկ թերթեր։*— Վիճակը՝ *քայքայված, սկզբից 2-րդ և 3-րդ պրակները ընկել են, վերջից նույնպես պակաս է։*— Գրությունը՝ *երկսյուն։*— Տողերը՝ *միջին հաշվով 34։*— Գիրը՝ *բոլորգիր։*— Զարդագրությունը՝ *վերնագրերը սկսում են թռչնագրերով։ Կրում է Թեհրանի Սուրբ Գեորգ եկեղեցու 1892 թվի կարմիր կնիքը։*— Գրիչը՝ *Մկրտում։*— Պատվիրատուն՝ *Միքայել վարդապետ։*— Վայրը՝ *Սուրբ Նախավկայի վանք։*— Ժամանակը՝ *ԺԷ դար։*

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

***Թ. 4ա.***— Ցանկ է յայսմաւուրքի բառ այբուբենից, վասն դիւրեաւ գտանելոյ զպատմութիւն եւ զվկայութիւն սրբոց մարտիրոսաց՝ զոր եւ կամեսցիս:

***Թ. 15ա.***— Այս ինչ է ի գիրքս քարոզիս առաջին ճառորն *(քարոզգրքի ցանկը)։*

***Թ. 20ա.***— Գրիգորի եռամեծի քաջ ճռետորի եւ անյաղթ փիլիսոփայի, աշակերտի Յովհաննու Որոտնեցւոյ արարեալ բանս խրատականս ոգեշահս եւ ճաճանչս իմաստալից, ի մեկնութիւն եւ ի գովեստ փառաց տօնից տէրունականաց...

### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

*Հիշատակարաններ ունի բազմաթիվ գլուխների վերջում, որոնցից որպես նմուշ բերում ենք մի քանիսը միայն։*

***Թ. 12ա.***— *Արդ աղաչեմ զհանդիպողսդ յիշել ի Քրիստոս զստացող սորա գրոցս Աստապատցի զ....... վարդապետն. հանդերձ ծնօղօքն եւ եղբար(ս)քն եւ ամենայն արիւնակիցն ազգատոհմօքն. ընդ սմին յիշելով արժանի առնիջիք եւ զիս զմեղօք դատապարտեալս եւ անհիշելի զՄկրտում գրիչս՝ Ասպահանցի, եւ դուք յիշօղքդ յիշեալ լիջիք։*

***Թ. 136ա.***— *Զվիրատրեալս մեղօք զՄկրտում գծողս յիշել աղաչեմ։*

***Թ. 309ա.***— *Ո՛վ սուրբ քարոզողք, յիշեցէք զՄիքայէլ մականուամբ վարդապետս։ (Այս Միքայելը, որ ստացողն է և հիշատակարաններ է գրել բոլոր գլուխների վերջում, Խաչատուր անունով մեկը ջնջել և իր անունն է գրել նրա տեղ։ Այս հիշատակարանում նախկին՝ Միքայել անունը ավելի հստակ է երևում)։*

***Թ. 314ա.***— *Ո՛վ սուրբ քարոզողք, յիշեցէք զՄիաբանք Սուրբ Նախավկայի (այստեղ «Նախավկայի» բառը ջնջված է Խաչատուր անունով մի վարդապետի կողմից և տեղը գրված «Ստեփաննոսի»։ Նախկին անունը հազիվ երևում է)։*

### ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***Թ. 425բ.***— *Կա մի փոքր կնիք հետևյալ գրությամբ. Քրիստոսի ծառայ Խաչատուր վարդապետ։*

***Թ. 425բ.***— *Սոյն քարոզգիրքս գտի ի սեթեւանն սրբակրօն Տէր Աբէլի Աբրահամեան Սանդիրարանցւոյ, որ էր վիճակաւոր ի սուրբ եկեղեցին Սրբոյն Գէորգայ քաջ զօրավարին, եւ մենք աստ հանդիպելով վասն մեր ծանրահարկութեան մասին, որ Ճահգապայ Զլլայ սուլթանէն կրեմք վասն այդ մասին եկ եւ յայ(տ)նելով խնդիրն մեր Ս. վարդապետին Իսահակ Աւագեան, որ իւր ազգասէր խնամօքն ազատեցէ զմեզ սոյն ծանրահարկութենէն, որ եւ Տէրն յաջողեցէ եւ ուղղեցէ այն խնդիրն եւ գործն։ 1895 նոյեմբեր 16։*

*Աբրահամ Ավդալեան Սանդիրարանցի։*

*(Ներքևում կան 6 տողեր, որոնք հետագայում ջնջված են և այժմ անընթեռնելի)։*

## № 53

## ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ *343։*— Պրակները՝ *29, յուրաքանչյուրը 12 թերթից։*— Մեծությունը՝ *18,5×14×6,5 սմ։*— Նյութը՝ *դեղնավուն թուղթ։*— Կազմը՝ *կաշեպատ տախտակ. առաջին էջը արծաթապատ, վրան մի խաչ հինգ ակներով։*— Վիճակը՝ *բավարար։*— Գրությունը՝ *երկսյուն։*— Դատարկ թղթեր՝ *98ա և 158ա։*— Տողերը՝ *20։*— Գիրը՝ *բոլորգիր։*— Զարդագրությունը՝ *խորաններ և լուսանցազարդեր. վերնագրերը կարմիր*

Թանաքով։— Գրիչը՝ Հովհաննես Գանձակեցի։— Պատվիրատուն՝ Փիրվել Գանձակեցի։— Ժամանակը՝ ՌՃԺԵ (1666 թ.)։— Պահպանակները՝ հասարակ 3—4 թուղթ սկզբում և վերջում։— Վայրը՝ Հարցանկ գյուղ, Գանձակ։

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

*Թ. 157բ.— Արդ, աղաչեմ զհանդիպողսդ սորայ, որք հանդիպիք, յիշեսջիք ի սուրբ եւ ի մաքրափայլ աղօթս ձեր զանարժան գծողս...։*

*Թ. 337ա—338բ.— Փառք անսկզբնականին... Ըստ այսմ օրինակի փափագօղ եղև աստուածասէր և մեծահաւատ ճարտար եւ իմաստուն, հեզ եւ խոնարհ, երկիւղած յԱստուծոյ եւ ի մարդկանէ, խնամիչ որբոց եւ այրեաց, ձեռնտու յամենայն կարօտեալս աստուածային բանի զՓիրվէլին, եւ կողակցին խաթունային, եւ որդւոյն Աբրահամին, եւ ծնօղացն Ամիրզուլին, եւ մօրն Դովլաթին, միւս մօրն Մարիանին։ Արդ, գրեցաւ սուրբ աստուածաձայն աւետարանս ձեռամբ անարժան Յովանիսի ի յերկիրս Գանջայ, ի գեօղս Հարցանկիս, ի դրան Սուրբ Մայլաղոնարբերին, ի հայրապետութեան երիցս երանելոյ հովուապետի տանս Աղուանից Տեառն Պետրոսի սրբազան կաթողիկոսին. (յ)եպիսկոպոսութեան Սուրբ Ամենափրկչին բաջ եւ արի րաբունապետի խաչատուր վարդապետի, եւ (ի) թագաւորութեան պարսից Փոքր Շահապազին, խանութիւն երկրիս Աւգուրլու խանին, ի թվականութեանս հայոց ՌՃԺԵ (1666 թ.) ամի։*

*Ո՜վ քաղցրաբարբառ մանկունք սուրբ եկեղեցւոյ, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զանարժան գծողս, եւ զհայրն իմ Ներսէս քահանայն, եւ զհանգուցեալ մայրն իմ Փարին, Աստուած յիշէ զձեզ իւր միւսանգամ գալստեանն, ամէն։*

*Գարձեալ յիշեցէք ի սուրբ աղօթս ձեր զուսուցիչն իմ զՏէր. Դաւիթն. յիշօղքդ յիշեալ լինիք ի Քրիստոսէ Աստուծոյն մերոյ, ամէն։*

*Դարձեալ յիշեցէք զՓիրվէլին, եւ եղբարցն՝ խաչումին, Էսզարին, եւ հօրեղբայրն իւր Նուրվէլին, եւ որդին իւր Մարտիրոսին։*

*Դարձեալ հիշեցէք զՓիրվէլին եւ զստերացն Սառային, Դովլաթին, Հոռոմին, Մարիանին. Նազումին, Էելափարին, Հերիկնազին։ Այլ եւ յիշեցէք հանեքն իւր Վարդանին եւ զոքանչն իւր Ազիզնի։ Աստուած իւրեանցն արքայութիւն տայ, ամէն։*

*Թ. 340ա.— Ես Գանջեցի Փիրվէլիս կալայ սուրբ աւետարանս ի հալալ ընչից իմոց եւ եսու վախմ ի դուռն Հարիսու Եկեղեցին, և յաղում աշխատութեամբ շինեցի եկեղեցին հանդերձ խորանաւն յիշատակ հոգոյ իմոյ եւ ծնողացն իմոց։ Ո՜վ հանդիպողք սուրբ աւետարանիս, ահա շինեցի Հարիսու եկեղեցին եւ գնեցի աւետարանս, եսու վախմ ի դուռն նորա, ոչ ոք չունի իշխանութիւն ծախել կամ գրաւել իմոց կամ օտարաց։ Եթէ ոք լուի, (յ)անդգնի ԳՃԺԸ (318) հայրապետաց նզովեալ եղիցի, պատիժ պատուհասն Յուդայի առցէ։ Աստուած այն քահանան աւրհնէ, որ տարին երկու անգամ յիշատակարանս կարդայ մէկ Ջրաւրհնիացն, մէկ Զատկին։ Թէ որ (յ)ուլանա(յ), ծուլանա(յ), կարդայ ոչ, պարտական լիցի դատաստանին, ամէն։ Հայր մեր որ յերկինս...։*

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Թ. 340բ.— Դարձեալ յիշեցէք եղիազարն, եւ իւր կողակից Մարգարիտն, եւ իւր հայր Առաքելն, իւր մայր, Եղիսաբեթն, իւր որդիք Յովհաննէսն. Մկրտիչն, Ըստեփանն եւ Փաշախաթուն(ն) եւ իւր հաներ Սիմոն իւզբաշին, իւր զոքանչ Երանին եւ իւր հաներ որդի Նուրին, եւ յիշողք վարձս ի միում անկամ զալստեանդ առնիցիք. ամէն։ ՌՄԿԸ (1819 թ.) հոգտեմբերի տասնեւհինգ։*

## № 54

## ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթեր՝ 322։— Պրակներ՝ 26, յուրաքանչյուրը 12 թերթից։— Մեծությունը՝ 17×12,3×6,5 սմ.։— Նյութը՝ սպիտակ հղկված գեղեցիկ մագաղաթ։— Կազմը՝ արծաթապատ տախտակ, վրան զարդանկարված։— Վիճակը՝ բավարար։— Գրությունը՝ երկսյուն։— Գիրը՝ բոլորգիր։— Տողերը՝ միջին հաշվով 23։— Զարդագրությունը՝ սկզբից կան մի շարք տերունական նկարներ, իսկ ավետարանների առջև՝ ավետարանիչների նկարները։ Ունի շատ գեղեցիկ լուսանցազարդություններ, մանրագրեր, թռչնագրեր, կիսախորաններ և այլն։ Ձեռագիրը մանրանկարչության մի շատ արժեքավոր ունիկում նմուշ է։ Նկարված է շատ մեծ արվեստով և գեղեցիկ վառ գույներով։— Ժամանակը՝ ԺԷ դար։

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Թ. 2ա.— Յիշատակ է սուրբ աւետարանս վանեցի Ղազարի որդի Ս(տ)եփաննոս վարդապետին, որ յետ ի դուռն Լիմայ սուրբ անապատի։ Մի ոք յիշեսցէ սայ ծախել կամ գրաւ գնել, եթէ ծախ(է), (յ)անդգնէ, կամ գրաւ գնէ, նա ընէծս Կայենի եւ զխաչհանողացն առցէ. յաւ պահողքն եւ խնամք տարող Աստուած օրհնէ, ամէն։*

## № 55

## ԳԱՆՁԱՐԱՆ

Թերթեր՝ 354։— Պրակներ՝ 29, յուրաքանչյուրը 12 թերթից։ Որոշ պրակներից թերթեր են թափվել։— Մեծությունը՝ 25,8×18,8×9 սմ.։— Նյութը՝ հաստ դեղնագույն թուղթ։— Կազմը՝ կաշեպատ հաստ տախտակ, վրան ճնշումով զանազան զարդարանքներ դրոշմված։— Վիճակը՝ քայքայված, թափվել են թերթեր։— Գրությունը՝ առաջին երկու պրակը տարբեր ձեռագրից բերված, երկսյուն, մնացյալ բոլորը միասյուն։ Թ. 1ա—23բ և 316ա—354բ տարբեր ձեռագրերից են։— Տողեր՝ առաջին երկու պրակը 22 տող, իսկ մնացյալը՝ 21։— Գիրը՝ բոլորգիր։— Զարդագրություն՝ վրան խորաններ, թռչնագրեր, լուսանցազարդություններ և երկրաչափական սիմետրիկ նկարներ։— Պատվիրատուն՝ Սիմեոն։— Ժամանակը՝ 1466 թ.։— Վայրը՝ Եկեղյաց գավառի Երզնկա քաղաքի Կապոսի անապատ։

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 79բ—80ա.— Նըմանեցա(յ) անառակին,
Վատնեցի զինչս Հայրդ ողորմածին,
Եւ արտասուօք ողորմալին,
Եւ հառաչեմ կողկողային,
Թէ Հայր մեղա(յ) քեզ ի յերկինս,
Թող ինձ զմեղս իմ զառաջին։

Թ. 313բ—314բ.— Արդ գրեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի զանձատե(տ)րն, ի մայրաքաղաքիս Եզընկա, ի գաւառս Եկեղեաց, ի յանապատս որ կոչի Կապոսի... ի հայրապետութեան Տէր Սարգիս արքեպիսկոպոսի, ի թվին ՋԺԵ (1466 թ.), մայիս ամսո(յ) Ի (20), եւ Քրիստոսի փառք յաւիտեանս, ամէն։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա տեսանելով կամ աւրինակելով, յիշեցէք ի (մաքրա)փայլ աղաւթս ձեր զստացող(ի)... (և) ամենայն զարմից իւրեանց, զոր Տէր Աստուած անսաս(ան պահես)ցէ զնա յամենայն հնարից սատանա(յ)ի, ամէն։ Եւ յետ աստեացս եղանելո(յ), սուրբ քարունապետացն եւ սուրբ վարդապետացն դասակից եւ պսակակից արասցէ, ամէն։

Դարձեալ յերես անկեալ աղաչեմ, յիշեցէք ի սուրբ աղաւթս ձեր զքաղցրաձայն փ(ի)լիսոփայն զՏէր Մարգարէն, նաեւ զմիւս վարդապետն զՏէր Երեմիայն զալեաւք ծերացեալն եւ զառաքինութեամբ զարդ(ար)եալն, նաեւ զգրոց աշակերտ(տ)քն զՏէր Յով(հ)աննէսն, զՏէր Մաղաքիայն, զՏէր Մարտիրոսն, եւ զՏէր Աւետիս սուրբ կրաւնաւորն, զՏէր Աստուածատուրն։

Դարձեալ յիշեցէք զնորաբողբոջ կուսակրաւն կրաւնաւորքս՝ զՏէր Աբրահամն, զՏէր Պետրոսն, զՏէր Աստուածատուրն, զՏէր Սարգիսն, եւ զտնտեսն զԿիրակոսն, զոր Տէր Աստուած ամենայն սուրբ կրաւնաւորաց աղաւթիւք փրկեսցէ զնոսա յամենայն հնարից բանսարկուին, ամէն։

Արդ, աղաչեմ զամենեսեան յիշեցէք ի սուրբ աղաւթս ձեր զանպիտան եւ զփց(ուն) (ջնջված է) (Սա)մուէլ Նաղաշն եւ զպապ(ն) ... զմայրն իմ զԳոհարն եւ զՄկրտիչն, եւ Աստուած յիշողա(ցն եւ յիշե)ցելոցն առհասարակ ողորմեսցի, ամէն։

Դարձեալ աղաչեմ Յիսուսի՝ զհաւրեղբայրն զՏէր Ման(ո)ւէլն եւ զհաւրաքուրն իմ զՄանխարն եւ զՅուղիտան եւ զՄարգարիտն։ Անմեղադիր լերուք սղալանաց եւ խոշորութեան գրոյս, աղաչեմ, աղաչեմ։

Դարձեալ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք ի սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զվերջին ըստացողս զՍառայն, եւ զմայրն իւր Թուրվանդան, եւ զայրն իւր զՋաքար, եւ զհայր իւր զՊետրոս, եւ զմայր իւր Շուքրան եւ զամենայն արեան մերձաւորս ի Քրիստոս հանգուցեալս։ Եւ ետ զսա ի դուռն սուրբ եկեղեցոյն Դաւթայ...

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 25ա.— Ես մեղաւոր, զանարժան, տրուպ, սուտանուն քահանայ ժ(ա)մարար Տէր Կարապետս...

Թ. 107բ.— Ես, Յիսուս(ի) Քրիստոս(ի) ծառայ մեղաւոր Զանգատրեան Մանու... (գ)ծեցի ու գրեցի թվին 1839 (1278)...

Թ. 315ա.— Յիշեցէք զՏէր Կիրակոս էրէցն, զհայրն իւր զՄուշեն, զեղբայրն իւր զԿարապետն, զմիւս եղբայր(ն) Ազատն, Ճաւքարն, Ծատուրն եւ իւրեանց մայր Նինիքարն, հօրքուրոջն Թուղթանայ։ Յիշե(ցէք) Թորոսին, հայրն Յեսաւին, մայրն Խուանդին, յիշեցէք ի Քրիստոս, ամէն։

Ես Թարոսս ծառայ Աստուծոյ... Աստուածածին սուրբ կոյս Յերկնաւորացն ի վայրում գին բո սեղանեցայ սուրբ Գէորգ։ Եկին իշան յեզր ծովուն, ողնեայ։ ... Շովրոն ճոպան չարին, ողնեայ։ Ի վ(ե)րայ ճոպանի (ճոկ)ան խաչին, ողնութիւն։ Քրիստոսի խաչն իրենց ողնեայ։ Գինը խախտելով գին խնամս տալս...

Թ. 315բ.— Վերջին ստացողի զանձար(անիս) Սիմոնն եւ կողակիցն իւր Եղիսաբեթն, եւ զորդին իմ Յովագիմն, Հոփսիմէն, յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք, ամէն։

Ով սիրելի հայրք եւ եղբարք, անարժան ծառայս յիշեցէք, որ շատ տառապանաց միջում ան։ Աղաթեցէք վասն իմ, զի թերեւս ազատեցայց։ Թվին ՌՃԽԲ (1793 թ.) նոյեմայ ԻԸ-ումն (28-ին) վերջ։

Թ. 336բ.— ...ամիսն նախայ ի Ա օրն ուրբաթ, ես Տէր Ոսկէսի որդի Ոհաննէսս գրեցի, որ իմ մեղով... սարկավագս ըսպասավոր սորայ կայ եկեղեցուն։ Ով աստուածասէր եղբարք, ով որ որ հան(դիպի, յի)շեսցէ բերան Հա(յ)ր մերով եւ ողորմիով ինձ ճիշէք, դուք ճիշեալ լինիք ի Քրիստոսէ....

(Շարունակելի)